

Հաշվետվություն

Հոգ. –Խոր. Կենտրոնի հոգեբան

Ն.Հովսեփյան

Հոգեբանական-խորհրդատվական կենտրոնի գործունեության վերաբերյալ, իրագեկում է անցկացվել բոլոր ֆակուլտետների ուսանողների (հատկապես առաջին կուրսեցիների) և քոլեջի սովորողների հետ: Մոնիթորինգ է իրականացվել պարզելու, վեր հանելու ուսանողներին հուզող խնդիրների՝ ուսումնական սթրեսների, առաջադիմությանը խանգարող գործոնների, կոնֆլիկտների վերաբերյալ:

Ուսանողների հետ անց են կացվել “Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման մեթոդիկա”, որի նպատակն է եղել բացահայտել ուսանողների հաղորդակցման ունակություններն ու դիրքորոշումները, դժվարություններն ու հիմնախնդիրները: Հաղորդակցման դժվարություններ ունեցող ուսանողները ստացել են անհատական խորհրդատվություն:

2018 թ-ի ապրիլի 27-ին կազմակերպել ենք դպրոցների հոգեբանների հետ սեմինար „Ժամանակակից դպրոցներում սոցիալ- հոգեբանական հիմնախնդիրները,, թեմայով: Սեմինարի ընթացքում քննարկվել են հիմնականում հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ տարվող հոգեբանական աշխատանքների սկզբունքները: Զեկուցումով հանդես են եկել հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոսներ՝ Զ.Գրիգորյանը և Մ. Մազմանյանը:

Անհատական խորհրդատվություն ստանալու նպատակով կենտրոն են դիմել 11 ուսանող, և երկու խմբային խորհրդատվություն: Յուրաքանչյուր ուսանող խորհրդատվական աջակցություն է ստացել 3-5 անգամ: Ուսանողները կենտրոն են դիմել տարաբնույթ խնդիրներով: Դրանք վերաբերել են ներանձնային կոնֆլիկտներին, վախերին և տագնապներին, քննական սթրեսներին, սոցիալական անհարմարվողականությանը, միջանձնային կոնֆլիկտներին և այլն: Ուսանողների հետ իրականացված խորհրդատվական աշխատանքներն արդյունավետ են եղել, վերջիններս կարողացել են իրենց խնդիրները մասամբ, կամ ամբողջապես հաղթահարել: